

երրորդ Ձեկմունքին, ի թվաբերութեան Հայոց ՌՀԷ. եւ ի յամսեանն ղեկտեմբերի ԺԴ²»:

Ստեփանոս երէց կ'աւարտէ Յայսմաւորքի մ'օրինակութիւնը «ի թվին Հայոց ՌՀԷ ամին, ի թաղաւորութեան Պարսից Շահ Արասին եւ ի հայրապետութեան տեառն Մովսէսին, ի Շօշ քաղաքն Ասպահան³»:

Այս կրկին յիշատակարաններս, որոնք գրուած են երկու տարբեր միջավայրերու մէջ, ցոյց կու տան թէ Մովսէս 1628 Դեկտեմբեր 14էն յառաջ հռչակուած է Ամենայն Հայոց կաթողիկոս⁴: Յամենայն ղէպս եթէ հարկ է արժէք ընծայել Դարանաղցւոյ տողերուն, անոնք այս մեկնութեամբ միայն կրնան իմաստ ստանալ. վասն զի ծանօթ է այլուստ թէ Մովսէս 1629 Մարտին արդէն կը կրէր կաթողիկոս տիտղոսը. Dimas della Croce Scalfa, որ Ասպահանի եպիսկոպոսն է, 29 Նոյեմբեր 1629 թուակիր գրութեամբ կը յայտնէ Կարդինալ Ludovisiին, թէ ինքը նոյն տարւոյն Մարտին ի Սպահան տեսակցութիւն ունեցած է Մովսէս կաթողիկոսի հետ: Միւս կողմէն ղեւեկնք նաեւ թէ 1628 Յունուարին

² F. Conybeare, A Catalogue of the armenian Manuscripts in the British Museum, էջ 183. հմտ. եւ Կամենից, էջ 181:

³ Ձեռագիրք Անտոնեան հարց յՕրթաքէօյ, Թ. 1, Յայսմաւորք, ըստ ցուցակադրութեան Հ. Բ. Չստոյեանի (անտիպ):

⁴ Արիստակէս Խարբերդցի 1628ին Սաղմոսաց մեկնութիւն մը օրինակել կու տայ (ի Կ. Պոլիս) «ի հայրապետութեան տեառն Դաւթի», Ձեռ. էջմ. 1017: